ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/29/2022

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 19 հուլիսի 2022 թ.

Կոռուպցիայի կանխարգելման Հանձնաժողովը, կազմով՝ Հայկուհի Հարությունյանի, Արամայիս Փաշինյանի և Մարիամ Գալստյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2022 թվականի հուլիսի 19-ին քննելով ՀՀ արդարադատության նախարար Կարեն Արեսի Անդրեասյանի կողմից հայտարարագրման ենթակա տվյալները «2021 թվականի պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականությունները ստանձնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և շահերի» հայտարարագրի (այսուհետ՝ Հայտարարագիր) ոչ ամբողջական և սխալ ներկայացնելու փաստերի առթիվ 2022 թվականի հունիսի 27-ի N ՎԻՎ 29/22 որոշմամբ հարուցված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործը՝

ՊԱՐԶԵՑ

I.Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1 Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Իրազեկ քաղաքացիների միավորում» հասարակական կազմակերպության «Փաստերի ստուգման հարթակ» լրատվամիջոցի լրագրող Նարեկ Մարտիրոսյանի հրապարակումը[1] և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, իրականացրել է ՀՀ արդարադատության նախարար Կարեն Արեսի Անդրեասյանի կողմից

[1] Գործընկերներ՝ նախարարությունում և մասնավոր ընկերություններում. ինչ կապ ունի Արդարադատության նորանշանակ փոխնախարարը նախարարի հետ - fip.am

2022 թվականի սեպտեմբերի 22-ին ներկայացված «2021 թվականի պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականությունները ստանձնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և շահերի» հայտարարագրի (այսուհետ՝ Հայտարարագիր) վերլուծություն, որի արդյունքում պարզել է.

1) Իրավաբանական անձանց պետական ռեգիստրից ստացված էլեկտրոնային ռեգիստրի տվյալների շտեմարանի և Հայտարարագրի վերլուծության արդյունքում արձանագրվել է, որ Կարեն Արեսի Անդրեասյանը 2021 թվականի մարտի 19-ին օտարել է ‹ . . . ›-ում իրեն պատկանող 100% բաժնեմասնակցությունը՝ 35,000,000 (երեսունհինգ միլիոն) ՀՀ դրամ օտարման արժեքով, սակայն օտարելուց ստացված եկամուտը Հայտարարագրի «Գ.1.1. Հաշվետու ժամանակաշրջանի եկամուտները» բաժնում չի հայտարարագրել:

2) Իրավաբանական անձանց պետական ռեգիստրից ստացված տվյալների համաձայն Կարեն Արեսի Անդրեասյանի կինը՝ Եվա Առաքելյանը, ունի 40 % մասնակցություն «Էյ Էմ իրավաբանական ընկերություն» ՍՊԸ-ում՝ գրանցման համար՝ 286.110.97764, ՀՎՀՀ՝ 02607778, որը Հայտարարագրի «Հայտարարատու պաշտոնատար անձի շահերի հայտարարագիր»[Ե] բաժնի «Մասնակցությունն առևտրային կազմակերպություններում»[Ե.1] ենթաբաժնում չի հայտարարագրվել:

3) ՊԵԿ տվյալների համաձայն՝ Կարեն Արեսի Անդրեասյանը ««ՉԵՔԻ ԸՆԴ ՔՈՄՓԱՆԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ԻՆԿ.»-ի հայաստանյան մասնաճյուղ» ՍՊԸ-ից ստացել է աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ՝ 1,972,511 (ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները), սակայն Հայտարարագրի «Հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց եկամուտները»[Գ.1] բաժնում 902,039.00 ՀՀ դրամ է հայտարարագրել (առանց հարկերի և այլ պարտադիր վճարների):

1.2 Հանձնաժողովը 2022 թվականի հունիսի 14-ին Կարեն Անդրեասյանին է հասցեագրել թիվ 01/1257-2022 ծանուցումը՝ Հայտարարագրում հայտնաբերված վերոշարադրյալ անհամապատասխանությունների վերաբերյալ՝ հրավիրելով 2022 թվականի հունիսի 27-ին վերջինիս ներկայությամբ կազմելու վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն:

1.3 2022 թվականի հունիսի 27-ին պատշաճ ծանուցված Կարեն Անդրեասյանի բացակայությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ 30/22 արձանագրությունը՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշով:

1.4 Հանձնաժողովի 2022 թվականի հունիսի 27-ի թիվ ՎԻՎ 29/22 որոշմամբ վերոնշյալ առերևույթ խախտումների հիմքով հարուցվել է վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթ: Վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ 30/22 արձանագրությունը, ինչպես նաև վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին ՎԻՎ 29/22 որոշումը՝ վարչական իրավախախտման գործի քննության տեղի և ժամանակի մասին նշումով, համապատասխան ուղեկցող գրությամբ էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացվել է Կարեն Անդրեասյանին:

1.5 Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի քննությունը նշանակվել է 2022 թվականի հուլիսի 19-ին ժամը 11:00-ին, ինչի կապակցությամբ Կարեն Անդրեասյանը պատշաճ ծանուցվել է: Գործը քննվել է Կարեն Անդրեասյանի բացակայությամբ, գործի քննությունը հետաձգելու միջնորդություն չի ներկայացվել:

II. Վարույթի մասնակցի բացատրությունը

Կարեն Անդրեասյանը Հանձնաժողով ներկայացրած գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«1. 19.03.2021թ. իսկապես օտարել եմ [redacted] իմ բաժնեմասը, սակայն այս օտարումից ստացված եկամուտը չեմ ներառել հայտարարագրում՝ պարզապես վրիպելու հետևանքով:

2. «Շահերի հայտարարագիր» բաժնում չի հայտարարագրվել իմ կնոջ՝ Եվա Առաքելյանի մասնակցությունը «Էյ Էմ իրավաբանական ընկերություն» ՍՊԸ-ում:

Այդ տեղեկությունը հստակորեն ներկայացված է Ե. Առաքելյանի կողմից ներկայացված 2021 թվականի պաշտոնատար անձի ընտանիքի անդամի գույքի և եկամուտների հայտարարագրում: Վստահ եմ՝ ակնհայտ է, որ կնոջս մասնակցությունը նշված առևտրային կազմակերպությանը թաքցնելու մտադրությունը բացակայել է:

Իմ կողմից ներկայացված հայտարարագրում այս տվյալը չի ներառվել՝ լրացման համար պահանջվող տեղեկության ոչ հստակ լինելու հետևանքով: Պաշտոնատար անձի պաշտոնի ստանձնման հայտարարագրի քննարկվող բաժնում նաև ընտանիքի չափահաս անդամի մասին տեղեկության ներառման պարտավորության մասին միակ ամրագրումն ու հիշատակումը հայտարարագրի լրացման ուղեցույցն է՝ ԿԿՀ լոկալ ակտը, որում հիշատակվում է, որ այստեղ անհրաժեշտ է նշել նաև ընտանիքի անդամի մասին, սակայն հայտարարագիրը լրացնելիս այս դետալը վրիպել է:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են: Միանշանակ է, որ բովանդակային առումով պարտականությունը կատարված է՝ անհրաժեշտ տվյալն ամբողջությամբ հայտարարագրված է՝ պարզապես ոչ թե անհասկանալի պահանջով միաժամանակ երկու հայտարարագրերում, այլ միայն ընտանիքի այն անդամի, որին վերաբերում էր այդ տեղեկությունը:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ խնդրում եմ հայտարարագրում այս տեղեկությունները չներառելը չդիտարկել որպես վարչական իրավախախտում և չկիրառել վարչական պատասխանատվության միջոց:»

Կարեն Անդրեասյանը ««ՉԵՔԻ ԸՆԴ ՔՈՄՓԱՆԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ԻՆԿ.»-ի հայաստանյան մասնաճյուղ» ՍՊԸ-ից ստացած աշխատավարձի չափը սխալ հայտարարագրելու վերաբերյալ իր 2022 թվականի մայիսի 10-ին ներկայացրած գրավոր պարզաբանմամբ նշել է.

«Իմ կողմից ևս մեկ անգամ ուսումնասիրվել են իմ բանկային հաշվին կատարված վճարումները և պարզվել է, որ ***անզգուշությամբ բաց է թողնվել մեկ վճարում***, ինչի արդյունքում ոչ ամբողջական տվյալ է ներմուծվել հայտարարագիր: Պարզաբանում եմ, որ ««ՉԵՔԻ ԸՆԴ ՔՈՄՓԱՆԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ԻՆԿ.»-ի հայաստանյան մասնաճյուղ»ից իմ ստացած եկամուտը կազմել է 1,407,287 ՀՀ դրամ՝ առանց հարկերի ու պարտադիր այլ վճարների»:

III.Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները

Հանձնաժողովն, ուսումնասիրելով թիվ ՎԻՎ/29/22 գործում առկա նյութերը, կատարել է հանգամանքների քննություն և հաստատված է համարում՝

3.1 Կարեն Արեսի Անդրեասյանը Հայտարարագրում՝ «Գ.1.1. Հաշվետու ժամանակաշրջանի եկամուտները» բաժնում չի հայտարարագրել [illegible]-ում իրեն պատկանող 100% բաժնեմասնակցությունը՝ 35,000,000 (երեսունհինգ միլիոն) ՀՀ դրամ օտարման արժեքով 2021 թվականի մարտի 19-ին օտարելուց ստացված եկամուտը: Մինչդեռ, ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրից ստացված տեղեկատվության և գործում առկա 2021 թվականի մարտի 19-ին կնքված [illegible] սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության բաժնեմասի առուվաճառքի պայմանագրի» համաձայն Կարեն Անդրեասյանը [illegible]ում իրեն պատկանող 100% բաժնեմասնակցությունը՝ 35,000,000 (երեսունհինգ միլիոն) ՀՀ դրամ արժեքով օտարել է: Հանձաժողովը հաստատված է համարում, որ Հայտարարագրում առկա է ոչ ամբողջական ներկայացված տվյալ:

3.2 ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրից ստացված տեղեկատվության համաձայն՝ Կարեն Անդրեասյանի կինը՝ Եվա Անդրանիկի Առաքելյանը, ունի 40 % մասնակցություն «Էյ Էմ իրավաբանական ընկերություն» ՍՊԸ-ում՝ գրանցման համար՝ 286.110.97764, ՀՎՀՀ՝ 02607778, ինչը Հայտարարագրի «Հայտարարատու պաշտոնատար անձի շահերի հայտարարագիր»(Ե) բաժնի «Մասնակցությունն առևտրային կազմակերպություններում»(Ե.1) ենթաբաժնում Կարեն Անդրեասյանը չի ներկայացրել: Հանձաժողովը հաստատված է համարում, որ Հայտարարագրում առկա է ոչ ամբողջական ներկայացված տվյալ:

3.3 ՊԵԿ տվյալների համաձայն՝ Կարեն Անդրեասյանը ««ՉԵՔԻ ԸՆԴ ՔՈՄՓԱՆԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ԻՆԿ.»-ի հայաստանյան մասնաճյուղ» ՍՊԸ-ից 2021 թվականի հունիս և հուլիս ամիսների համար ստացել է 1,972,511 ՀՀ դրամ (ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները) աշխատավարձ և դրան հավասեցված այլ վճարումներ՝ առանց հարկերի և այլ պարտադիր վճարների՝ **1,467,521**: Մինչդեռ, Կարեն Անդրեասյանը Հայտարարագրի

«Հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց եկամուտները»(գ.1) բաժնում հայտարարագրել է ««ՉԵՔԻ ԸՆԴ ՔՈՄՓԱՆԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ԻՆԿ.»-ի հայաստանյան մասնաճյուղ» ՍՊԸ-ից ստացված աշխատավարձ՝ 902,039.00 ՀՀ դրամ (առանց հարկերի և այլ պարտադիր վճարների): Հանձաժողովը հաստատված է համարում, որ Հայտարարագրում առկա է սխալ ներկայացված տվյալ:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 ՀՀ արդարադատության նախարար Կարեն Արեսի Անդրեասյանը «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համաձայն՝ հանդիսանում է գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրման պարտականություն ունեցող պաշտոնատար անձ:

4.2 Օրենքի 41-րդ հոդվածի (Եկամուտների հայտարարագրի բովանդակությունը սահմանող) 1-ին մասի համաձայն՝ հայտարարագիրը ներառում է սույն հոդվածով սահմանված եկամուտները և դրանց ստացման աղբյուրները: Նույն հոդվածի 4-րդ մասի 1-ին մասի համաձայն՝ հայտարարագրման ենթակա են Հայաստանի Հանրապետության դրամով, արտարժույթով կամ բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացված հետևյալ եկամուտները՝ *աշխատանքի վարձատրությունը կամ դրան հավասարեցված այլ վճարումները* (...), նույն հոդվածի 4-րդ մասի 12-րդ կետի համաձայն՝ հայտարարագրման ենթակա են (...) *գույքը (նաև հայտարարագրման ոչ ենթակա) օտարելուց ստացված եկամուտը*:

4.3 Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտարարագրի՝ ***«Մասնակցությունը առևտրային կազմակերպություններում» բաժնում*** նշվում են կազմակերպության անվանումը, որի հիմնադիր են կամ որի կանոնադրական կապիտալում մասնակցություն ունեն կամ որի իրական շահառու են հայտարարատու պաշտոնատար անձը ***և (կամ) նրա ընտանիքի անդամները***, կազմակերպությունում ունեցած ուղղակի կամ անուղղակի մասնակցության (փայեր, բաժնետոմսեր, բաժնեմասեր) չափը, մասնակցությունը ձեռք բերելու կամ իրական շահառու դառնալու օրը, ամիսը, տարին, կամ որի կառավարման

մարմիններում ընդգրկված անձանց իրավասու են նշանակելու կամ ազատելու հայտարարատու պաշտոնատար անձը և (կամ) նրա ընտանիքի անդամները, հարկ վճարողի հաշվառման համարը, հասցեն:

4.4 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայտարարատուի կողմից հայտարարագրում **անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ** ներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

4.5 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.6 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.7 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.8 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.9 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին:

4.10 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենքով սահմանված հայտարարագրման ենթակա տվյալներին վերաբերող իրավակարգավորումներով սահմանվածն ամբողջական կերպով ներկայացված է նաև հայտարարագրերի լրացման էլեկտրոնային համակարգում, որտեղ հայտարարատուն հնարավորություն ունի ընտրել կոնկրետ եկամուտի տեսակը, դրա վերաբերյալ այլ տեղեկություններ, շահերի դեպքում՝ կազմակերպության անվանումը, կազմակերպությունում ունեցած ուղղակի կամ անուղղակի մասնակցության չափը և այլ տեղեկություններ:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 12-ի N 04-Ն որոշմամբ սահմանվել է հայտարարագրի ներկայացման և հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու կարգը, հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջները:

Առաջնորդվելով նշված որոշմամբ սահմանված հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջներով՝ Հանձնաժողովը հայտարարագրերի լրացման կարգի խախտում է որակել այն դեպքերը, երբ հայտարարագրման **ենթակա տվյալը** լրացվել է սխալ ենթաբաժնում (2021 թվականի ապրիլի 9-ի թիվ ՎԻՎ/02/21 և 2021 թվականի մարտի 18-ի թիվ ՎԻՎ/01/21 որոշումներ):

Այն դեպքում, երբ հայտարարատուի ներկայացրած տվյալին վերաբերող որևէ տվյալ չի լրացվում համապատասխան դաշտում և լրացվում է այլ ենթաբաժնում՝ հայտարարատուն

թույլ է տալիս հայտարարագրի լրացման կարգի պահանջների խախտման արարք, մինչդեռ Օրենքով պահանջվող ***հայտարարագրման ենթակա առանձին տվյալները չներկայացնելու կամ սխալ ներկայացնելու դեպքում՝ թույլ է տալիս ոչ ամբողջական կամ սխալ տվյալների ներկայացման արարք:***

Սույն գործով Կարեն Անդրեասյանը «2021 թվականի պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականությունները ստանձնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և շահերի» հայտարարագրում ***անզգուշությամբ*** ներկայացրել է հետևյալ սխալ և ոչ ամբողջական տվյալները.

1) «Գ.1.1. Հաշվետու ժամանակաշրջանի եկամուտները» բաժնում չի հայտարարագրել ՀՀ-ում իրեն պատկանող 100% բաժնեմասնակցությունը՝ 35,000,000 (երեսունհինգ միլիոն) ՀՀ դրամ օտարման արժեքով 2021 թվականի մարտի 19-ին օտարելուց ստացված եկամուտը: Նշված արարքով Կարեն Անդրեասյանը խախտել է Օրենքի 41-րդ հոդվածի 4-րդ մասի 12-րդ կետի պահանջները, որի համաձայն՝ հայտարարագրման ենթակա է *գույքը (նաև հայտարարագրման ոչ ենթակա) օտարելուց ստացված եկամուտը:* Հետևաբար, Հայտարարագրում առկա է ոչ ամբողջական ներկայացված տվյալ:

2) «Հայտարարատու պաշտոնատար անձի շահերի հայտարարագիր»[Ե] բաժնի «Մասնակցությունն առևտրային կազմակերպություններում»[Ե.1] ենթաբաժնում Կարեն Արեսի Անդրեասյանը չի ներկայացրել կնոջ՝ Եվա Առաքելյանի, ունեցած 40 % մասնակցությունը «Էյ Էմ իրավաբանական ընկերություն» ՍՊԸ-ում: Նշված արարքով Կարեն Անդրեասյանը խախտել է Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, որի համաձայն՝ հայտարարագրի՝ «Մասնակցությունը առևտրային կազմակերպություններում» բաժնում նշվում են կազմակերպության անվանումը, որի հիմնադիր են կամ որի կանոնադրական կապիտալում մասնակցություն ունեն կամ որի իրական շահառու են հայտարարատու պաշտոնատար անձը ***և (կամ) նրա ընտանիքի անդամները***, կազմակերպությունում ունեցած ուղղակի կամ անուղղակի մասնակցության (փայեր, բաժնետոմսեր, բաժնեմասեր) չափը, մասնակցությունը ձեռք բերելու կամ իրական շահառու դառնալու օրը, ամիսը, տարին, կամ որի կառավարման մարմիններում ընդգրկված անձանց իրավասու են նշանակելու կամ ազատելու հայտարարատու պաշտոնատար անձը և (կամ)

նրա ընտանիքի անդամները, հարկ վճարողի հաշվառման համարը, հասցեն: Հետևաբար, Հայտարարագրում առկա է ոչ ամբողջական ներկայացված տվյալ:

3) ՊԵԿ տվյալների համաձայն Կարեն Արեսի Անդրեասյանը ««ՉԵՔԻ ԸՆԴ ՔՈՄՓԱՆԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ԻՆԿ.»-ի հայաստանյան մասնաճյուղ» ՍՊԸ-ից 2021 թվականի հունիս և հուլիս ամիսների համար ստացել է 1,972,511 ՀՀ դրամ (ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները) աշխատավարձ և դրան հավասեցված այլ վճարումներ՝ առանց հարկերի և այլ պարտադիր վճարների՝ **1,467,521**, սակայն Հայտարարագրի «Հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց եկամուտները»[գ.1] բաժնում 902,039.00 ՀՀ դրամ է հայտարարագրել (առանց հարկերի և այլ պարտադիր վճարների): Նշված արարքով Կարեն Անդրեասյանը խախտել է Օրենքի 41-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին մասի պահանջները, որի համաձայն՝ հայտարարագրման ենթակա է *աշխատանքի վարձատրությունը կամ դրան հավասարեցված այլ վճարումները:* Տվյալ դեպքում հայտարարագրում ներկայացվել է սխալ տվյալ:

Հաշվի առնելով արձանագրված խախտումների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի պահանջները, սույն գործով առկա փաստերից հետևում է, որ Կարեն Անդրեասյանը Հայտարարագրում անզգուշությամբ ներկայացրել է սխալ և ոչ ամբողջական տվյալներ, որի արդյունքում թույլ է տրվել Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված արարքներ:

-ում իրեն պատկանող 100% բաժնեմասնակցությունը օտարելուց ստացված եկամուտը չհայտարարագրելու, ինչպես նաև ««ՉԵՔԻ ԸՆԴ ՔՈՄՓԱՆԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ԻՆԿ.»-ի հայաստանյան մասնաճյուղ» ՍՊԸ-ից ստացած եկամուտի չափը սխալ հայտարարագրելու փաստերն իր գրավոր դիրքորոշմամբ ընդունել է նաև Կարեն Անդրեասյանը՝ նշելով, որ սխալ կամ ոչ ամբողջական տվյալներ ներկայացնելն արդյունք է ***վրիպման և անզգուշության:***

Խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, արդյո՞ք տվյալ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Արարքի որակական կողմը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել՝ արդյո՞ք արարքը կարող է պարունակել Օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ և այնպիսի էական վնաս չի պատճառել ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը կդիտարկվի համաչափ:

Հանձնաժողովը, անդրադառնալով Եվա Առաքելյանի մասնակցությունը «Էյ Էմ իրավաբանական ընկերություն» ՍՊԸ-ում չհայտարարագրելու վերաբերյալ Կարեն Անդրեասյանի կողմից ներկայացված գրավոր բացատրությանը, ներկայացնում է հետևյալ դիրքորոշումը.

Սույն գործում առկա նյութերով առկա է փաստական տվյալ առ այն, որ Կարեն Անդրեասյանի կնոջ՝ Եվա Առաքելյանի մասնակցությամբ «Էյ Էմ իրավաբանական ընկերություն» ՍՊԸ-ն հանդիսանում է գործող կարգավիճակ ունեցող ընկերություն, որը իրավաբանական ծառայություններ է մատուցում իրավունքի բոլոր ճյուղերով:

Հանձնաժողովը իր կողմից կայացված նախորդ որոշումներով շահերի հայտարարագրում ոչ ամբողջական տվյալներ հայտարարագրման հետ կապված՝ նվազ նշանակություն ունեցող է որակել այն դեպքը, երբ պաշտոնատար անձի հայտարարագրի Դ.1. «Մասնակցությունը առևտրային կազմակերպություններում» բաժնում հայտարարատուի ընտանիքի կազմի մեջ մտնող անձի մասնակցությունը առևտրային կազմակերպությունում չի ներկայացվել, սակայն գործում առկա փաստերի համաձայն (Պետական եկամուտների կոմիտեից ստացված տվյալներ) հաստատվել է, որ առևտրային կազմակերպության գործունեությունը ***ժամանակավոր դադարեցված է***, (ՎԻՎ 05/22, ՎԻՎ 22/22): Հանձնաժողովը գտել է, որ կազմակերպության գործունեությունը ժամանակավոր դադարեցված լինելու հանգամանքով պայմանավորված՝ արդյունքում այդ նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների էությունը չի խաթարվել:

Մեկ այլ գործով Հանձնաժողովը նվազ նշանակություն ունեցող է որակել այն դեպքը, երբ ***նույն հայտարարագրի*** «Առկա են արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում ներկայացվել է **հայտարարատուի բաժնեմասնակցությունը** առևտրային կազմակերպությանը, սակայն «Հայտարարատու պաշտոնատար անձի շահերի հայտարարագիր» բաժնի «Մասնակցությունն առևտրային կազմակերպություններում» ենթաբաժնում չի ներկայացվել (ՎԻՎ/27/2022): Այս առումով Հանձնաժողովն արձանագրել է,

որ «Առկա են արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում ներկայացված տվյալները հանդիսանում են այն անհրաժեշտ և համակարգային առումով փոխկապակցված տվյալները, որոնք բավարար են պաշտոնատար անձի հայտարարագրերի պատշաճ վերլուծությունն իրականացնելու համար: Նշվածից բացի, վերոնշյալ բաժնում ներկայացված տվյալներով ապահովվել է նաև պետական պաշտոն զբաղեցնող անձի իրական գույքային դրության վերաբերյալ հանրության տեղեկացվածությունը, որպիսի պայմաններում գործնականում չի խաթարվել հանրային հաշվետվողականությունը: Նշվածով պայմանավորված՝ տվյալ խախտումն ունի նվազ նշանակություն, ինչը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 21-րդ հոդվածի ուժով նշված խախտման կապակցությամբ վարչական պատասխանատվությունից ազատելու և բանավոր դիտողություն հայտարարելու հիմք է հանդիսացել:

Սույն գործով առկա փաստական հանգամանքները տարբերվում են վկայակոչված գործերով ներկայացված հանգամանքներից, քանի որ «Էյ Էմ իրավաբանական ընկերություն» ՍՊԸ-ն հանդիսանում է ***գործող կարգավիճակ ունեցող*** իրավաբանական ծառայություններ մատուցող ընկերություն, որպիսի պարագայում, Հանձնաժողովի գնահատմամբ, մեծ է շահերի բախման տեսանկյունից հնարավոր ազդեցության ռիսկը, հետևաբար, հայտարարատու պաշտոնատար անձի կողմից ներկայացվող հայտարարագրում ընտանիքի անդամի շահերի հայտարարագրումն Օրենքի ձևական պահանջ չէ, այլ Օրենքով պահանջվող տվյալ, որի միջոցով ապահովվում է հայտարարատու պաշտոնատար անձի հանրային վերահսկողության տեսանկյունից հանրային հաշվետվողականությունը, շահերի հնարավոր բախման իրավիճակները հսկելու և կանխարգելելու հնարավորությունը: Հայտարարագրման համակարգը նպատակ է հետապնդում հանրային գործիչների և քաղաքացիական ծառայողների վերաբերյալ տեղեկությունների բացահայտման միջոցով ձևավորել պետական ինստիտուտների նկատմամբ հանրային վստահություն և բարձրացնել նրանց գործունեության թափանցիկությունը: Այն օժանդակում է հստակեցնել ապօրինի հարստացման կամ այլ անօրինական գործողությունների ամբողջական պատկերը՝ տրամադրելով լրացուցիչ ապացույցներ, հնարավորություն է տալիս բացառել շահերի բախման իրավիճակները, բացահայտել պետական պաշտոն զբաղեցնող անձանց կողմից

անհամատեղելիության պահանջների հնարավոր խախտման դեպքերը և բարձրացնել հանրային ծառայողների բարեվարքություն աստիճանը:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի նպատակն է ապահովել պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) հանրային հաշվետվողականությունը, հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեությունը:

Միաժամանակ, հաշվի առնելով, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված արարքի համար նախատեսված է վարչական պատասխանատվության ոչ հստակ սահմանաչափ (տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով), Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով վարչական տույժ կիրառելիս պետք է հաշվի է առնել ինչպես խախտման բնույթը, այնպես էլ պատասխանատվությունը ծանրացնող կամ մեղմացնող հանգամանքները:

Հանձնաժողովը գտնում է, որ սույն գործով առկա չէ Օրենսգրքի 34-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող որևէ հանգամանք, այլ առկա է Օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք (***հայտարարատուն ընդունել է հայտարարագրման ենթակա տվյալները հայտարարագրում սխալ և ոչ ամբողջական ներկայացնելու արարքում իր անզգուշությունը***):

Ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 26-րդ հոդվածով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «2021 թվականի պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականությունները ստանձնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և շահերի» հայտարարագրում

անզգուշությամբ ոչ ամբողջական և սխալ տվյալներ ներկայացնելու համար Կարեն Արեսի Անդրեասյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200 000 ՀՀ դրամի չափով:

2. Տուգանքը պետք է վճարվի իրավախախտողի կողմից գանձապետական 900005001335 «Իրավախախտումների համար կիրառվող վարչական տուգանքներ և պատժամիջոցներ» հաշվեհամարին՝ վճարման անդորրագրի **«նպատակ» դաշտում պարտադիր նշելով սույն որոշման համարը**:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կարեն Անդրեասյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Կարեն Անդրեասյանին տրամադրել եռօրյա ժամկետ «2021 թվականի պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականությունները ստանձնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և շահերի» հայտարարագրի համապատասխան բաժիններում ուղղումներ կատարելու համար:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**